# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 63

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի , Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ , 11-րդ և 22.1 կետերի , հիմք ընդունելով Դավիթ Կիրակոսյանի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 30-ին Քարաշամբ համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դիմումի առարկա հանդիսացող ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներին ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գյուղ Քարաշամբի Ամառանոցային թաղամասի 2-րդ փողոցի 5 հասցեում գտնվող Դավիթ Կիրակոսյանին պատկանող 07-066-0101-0031 ծածկագրի տակ ինքնակամ կառուցված՝ այգետնակ 224,36 քմ (1986թ.), աստիճանավանդակ 2,57 քմ (1986թ) , ծածկոց 13.39 քմ (1986թ.) , լողավազան 14,30 քմ (1986թ.), հենապատ 1,36 քմ (1986թ.) ճանաչել օրինական:

Համայնքի ղեկավար ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ

20 __ թ. ________________
գ.Քարաշամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 64

### ՀԱՅԿՈՒՇ ՋԱԼԱԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-066-0111-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՅԳԵՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի ինչպես նաև Քարաշամբ համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 10 - ի N6 որոշմամբ և հիմք ընդունելով Հայկուշ Ջալալյանի դիմումը`

Որոշում եմ`

Հայկուշ Ջալալյանին պատկանող 07-066-0111- 008 ծածկագրի տակ գտնվող այգեհողամասը գտնվում է գյուղ Քարաշամբի Ամառանոցային թաղամասի 11-րդ փող. 29 հասցեում:

**Համայնքի ղեկավար`** **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**

20 __ թ. ____________________
գ.Քարաշամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 65

## ՔԱՐԱՇԱՄԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի N 1 հավելվածով, N 13-Ն հրամանի հավելվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2019թ - ի հոկտեմբերի 4-ին ժամը 11-00 -ին հայտարարել մրցույթ Քարաշամբի համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոն զբաղեցնելու համար.

ա.Առաջատար մասնագետ՝ (ծածկագիր՝ 3.1-1)

բ. Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դրվում են՝աշխատակազմիքարտուղարի՝ Ա. Սմբատյանի վրա:

**Համայնքի ղեկավար՝** **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**

20 __ թ. ____________________
գ.Քարաշամբ